ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» 03 2019թ. N:22 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել ֆինանսական աուդիտ:
2. Աուդիտ իրականացնել ընկերության 2018թ. հուլիսի 1-ից մինչև աուդիտի ավարտը ընկած ժամանակահատվածի ֆինանսական գործունեության նկատմամբ:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 2019թ.մարտի 13-ից, 4 աշխատանքային օրվա ընթացքում:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է